



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

25.08.2017

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/25

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2333 գրության հիման վրա, 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2332 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնով «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից: Հայտերի բացման նիստի ավարտից հետո սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 479.938 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, ուստի հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Էդգար Համբարձումյանը:

3. «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը 03.08.2017թ. գրությամբ դիմել է «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը՝ պատշաճ ծանուցված լինելով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԷՍ-2017/25 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, հորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Հորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2332 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև հանձնաժողով) 26.04.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 23.03.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության՝ ընթացակարգի գների ամփոփման N 1 Հավելվածի համաձայն՝ ընթացակարգի 12-րդ չափաբաժնով «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես 2-րդ տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.3 կետով Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 13.04.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել՝ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ի՝ 23.03.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» (այսուհետ

նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ եզրակացություն:

Կոմիտեի կողմից 19.04.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 479.938 (չորս հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր երեսունութ) ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 26.04.2017թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

- 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու (23.03.2017թ.) օրվա դրությամբ ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձիք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

- 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը գտնում է, որ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով այն մասին, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց

հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված բողոքով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.08.2017թ. . թիվ 03/27-1/14021-17 գրությամբ «Մայ Յունիֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ